№ 117 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 2 1901 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 2 № 117

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, յունիսի 3-ին
ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՕՆԻ ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒ
ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ
մահվան տասնամեակի առիթով, Կուկիայի Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում կը մատուցվի պատարագ եւ հոգեհանգիստ հանգուցեալի յիշատակին։ Պատարագի սկիզբն է առաւօտեան 10 ժամին եւ հոգեհանգստինը՝ 11 ժամին։
Հոգեւորականներին առանձին հրաւէր չի լինի։ 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական գործողներին օգնող կազմակերպութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Սալմաստի ցաւերի առիթով. Դատաստանական դահլիճից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բելգիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Դարձեալ քահանայական հարցը։

ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

—

Վաղը, կիրակի, յունիսի 3-ին, Թիֆլիսի մամուլի ներկայացուցիչները հրաւիրված են ժողովի՝ քննելու կովկասեան մամուլի գործողներին օգնող դրամարկղի ծրագիրը։

Այդ դրամարկղի նպատակը պէտք է լինի օգնել գրական գործողներին, տալով նրանց պարտք փոխարինաբար, զանազան դէպքերում օժանդակութիւն և որոշ պայմաններում թոշակ։ Դրամարկղը հաստատելու համար պէտք է ցանկացողների թիւը լինի առնուազն 20 հոգի։ Դրամարկղին կարող են մասնակցել գրականութեամբ պարապող անձինք, որոնք սակայն ունեն ոչ պակաս քան 25 ամեայ հասակ և ոչ աւելի քան 50 տարիներ։ Դրամարկղին մասնակցողները պէտք է վճարեն ամսական 50 կոպէկից սկսած մինչև 10 ռուբլի։

Անկասկած, անդամավճարներից գոյացած գումարներով անկարելի կը լինի կազմել մի այնպիսի պատկառելի դրամարկղ, որ կարող լինէր լուրջ օգնութիւն հասցնել գրականագէտներին։ Սակայն այստեղ կարևոր է գործի սկզբնաւորութիւնը։ Երբ պատրաստ կը լինի կազմակերպութիւնը, այն ժամանակ կը գտնվեն համակրողներ, որոնք օգնութեան կը գան այդ բարի գործին։ Թէ մասնաւոր նուիրատուութիւններով, թէ ներկայացումների միջոցով և թէ ուրիշ եղանակներով կարելի կը լինի ժողովել բաւականաչափ գումար և իրագործել նոր տեսակ հասարակական աշխատաւորների օգնութեան մի կարևոր գործը։

Գրական աշխատողները մեր կեանքի մէջ թէև դեռ նորութիւն են, բայց այնքան բազմացել են, որ նրանց վիճակը իրաւացի կերպով արդէն դառնում է հասարակութեան հոգածութեան առարկայ։ Նոյն իսկ գտնվեցին անձինք, որոնք իրանց կեանքի ժամանակ նշանակեցին, կամ կտակեցին որոշ գումարներ գրական գործողներին։

Խնդիրը ժամանակակից է և անհրաժեշտ։ Նրա աջող լուծումը կախված է կազմակերպութեան նպատակայարմար ձևաւորից։ Մեր առաջ դրած ծրագիրը մշակված է ռուս գրագէտներին ու գիտնականներին օժանդակող դրամարկղի և ռուս գրողներին փոխադարձ օգնող ընկերութեան ծրագիրների հիման վրա, մի քանի մասնաւոր փոփոխութիւններով։

Շատ ցանկալի է, որ վաղվայ ժողովը գար գրական հետևանքների և կազմվեր ապահովութիւն գրական գործողների համար, որոնք մեծ մասամբ աշխատում են օրն ի բուն, չը մտածելով իրանց ապագայ ապահովութեան մասին կարօտութեան և ծերութեան օրերում և ոչինչ չեն կարողանում թողնել իրանց ընտանիքների և ժառանգների համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ
XLVIII

«Գինու քացախը թունդ կը լինի», ասում է ժողովուրդը, տեսնելով, թէ ինչպէս ամեն տեսակ դաւաճաններ նախանձայոյզ եռանդով ոտնատակ են տալիս այն բոլորը, ինչ որ պաշտում էին նրանք մի ժամանակ։

Այո, «գինու քացախը թունդ կը լինի», եւ այդ անթիւ անգամ նկատված ճշմարտութիւնն են մի աւելորդ անգամ եւս հաստատում այն բողոքները, որոնք լսվում են Սալմաստի ժողովրդի կողմից այն պարոնների դէմ, որոնք մի ժամանակ ժողովրդի բարեկամներ էին համարվում, իսկ այժմ դարձել են «ենիչէրիներ» նրա վերաբերմամբ։

Այդ «ենիչէրիների» մասին խօսվեց «Մշակում» մի քանի անգամ (№№ 35, 54 եւ 66) եւ վերջին անգամ երէկ եւ այսօր «Սալմաստի ցաւերի առիթով» վերնագիրը կրող յօդուածում։ Ես հարկաւոր եմ համարում մի քանի խօսք ասել այդ յօդուածի առիթով, որովհետեւ ընթերցողներից նրանք, որոնք ուշադրութիւն են դարձրել նոյն հարցի մասին իմ գրած յօդուածի վրա (№ 66, «Արձագանքներ»), կարող են սխալվել եւ այն բոլորը, ինչ որ այդ յօդուածը գրող պարոնը ասում է Սալմաստում ապրող «օտարերկրացիների» մասին, վերագրել ռուսահայերին, մինչդեռ այդ միանգամայն դէմ է ճշմարտութեան։

«Մշակի» № 66-ում, խօսելով պ. Ս. Մ.-ի յօդուածի մասին, որի մէջ առաջ էին բերված Սալմաստում ապրող «օտարերկրացիների» քաջագործութիւնները, ես աւելի որոշել էի այդ «օտարերկրացի» բառը, ասելով, թէ խօսքը իսկապէս ռուսահայերի մասին է։

Ես գիտէի, որ Սալմաստում ապրում են ռուսահայեր, որոնք, գնացած լինելով այնտեղ քաղաքակրթական դեր կատարելու համար եւ լինելով ժողովրդի իսկական բարեկամներ, կրում են ի միջի այլոց եւ այդ չարիքի դէմ, բայց կարծում էի, թէ «ենիչէրիներն» էլ, գլխաւորապէս, ռուսահայեր են։ Դժբաղդաբար ինձ համար, բայց բարեբաղդաբար ռուսահայերի համար, դուրս է գալիս,—ինչպէս ինձ հաւատացրեցին բոլորովին վստահելի եւ լաւատեղեակ անձինք,—որ «ենիչէրիների» մէջ չը կայ ոչ մի ռուսահայ։

Ես ամենայն պատրաստակամութեամբ խոստովանում եմ սխալս, թէեւ սխալս ստուգելու առիթ տուեց ինձ մի մասնաւոր նամակ, որ ժամանցայոյց էր անում այդ բանը, ինչպէս յետոյ երեւաց, հիմնաւոր կերպով, բայց հայերիս այնքան յատուկ ամբարտաւան ոճով։

Տ. Ց.

ՍԱԼՄԱՍՏԻ ՑԱՒԵՐԻՑ ԱՌԻԹՈՎ

(Շարունակութիւն)

Եթէ այդքանով վերջանար ենիչէրիների արարքները, տակուն սալմասեցին կը դիմանար, կը տանէր. բայց ինչպէս դիմանայ, ասացէք խնդրեմ, երբ այդ ենիչէրին այսքանից յետոյ չէ խղճահարվում ոտնակոխ անելու նրա բարոյական զգացմունքներից ամենաբարձրը—ընտանեկան սրբութիւնը։ Քանի-քանի ընտանիքներ նրանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՐՁԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—

(Շարունակութիւն

Մաշտոցի եւ տօնացոյցի գիտութիւնը բաւական համարելով քահանայի համար, Մեսրոպ քահանայ Մելեան բնական, ուղիղ ճանապարհով ուխտ պիտի գնար Արչէն երէցի մօտ եւ խոստովանելով խոստովանէր, որ ճշմարիտ էր ասում նա, թէ տգէտ ժողովրդին ուսեալ քահանան հարկաւոր չէ, չէ սազում։ Այդպէս էլ անում է Մելեանը։ Ոչինչ չէ կարելի ասել այս բանի դէմ։ Ինչ որ բնական է, բնական էլ կը մնայ։ Զարմանալին այն կը լինէր, եթէ ուրիշ կերպ վարվէր Մելեան քահանան...

Քիչ չեն այնպիսի քննադատներ, որոնք զոհ են գնում այն չար դեւին, որ անպատճառ, իրաւացի թէ անտեղի կերպով, հակառակվել եւ միմիայն հակառակը պնդել է պահանջում։ Արիստակէս եպիսկոպոսը իր ծրագրի մէջ ասել էր, թէ քահանայացուներին պէտք է քննութեան ենթարկել էջմիածնի ճեմարանում։ Մեսրոպ քահանան մասամբ համաձայն է դրա հետ. նա էլ ասում է, թէ կօնսիստորիաներից պէտք է խլել հարցաքննելու իրաւունքը, որ մի չարիք է։ Բաց ո՞վ պիտի հարցաքննէ։ «Օրէնքով թեմական առաջնորդներին է վերապահած իրանց թեմի տիրացուներին հարցաքննելու իրաւունքը», ասում է Մելեան։ Շատ լաւ։ Բայց ինչ է կօնսիստորիան. միթէ դա մի առանձին հիմնարկութիւն է, ուր առաջնորդը ոչինչ իրաւունքներ չունի։ Ամենքը գիտեն, որ կօնսիստորիաները այն են, այն կարող են լինել, ինչ առաջնորդներն են կամենում։ Չէ եղել, չը կայ եւ չէ կարող լինել անկախ, թեմական առաջնորդին հակառակ կօնսիստորիա, քանի որ առաջնորդը իրաւաքանչիւր րոպէ կարող է դուրս անել այն անդամին, որ յանդգնում է իր սեփական կարծիքն ունենալ։ Տիրացուների հարցի մէջ առաջնորդը ուղղակի ներկայանում է իբրեւ չահ ունեցող կողմ. դա նրա արդիւնքի աղբիւրն է եւ յայտնի է թէ ինչեր է արել մեզանում եւ ինչեր է անում այդ աղբիւրը։ Հետեւաբար առանց առաջնորդի կամքի, առանց նրա հաճութեան չէ կարող ընդունվել կամ մերժվել ոչ մի տիրացու։ Կօնսիստորիաները լոկ ձեւ են, լոկ անուանական գործիք։ Էլ ինչ է նշանակում հարցաքննութեան իրաւունքը կօնսիստորիաներից խլել եւ տալ առաջնորդներին, քանի որ վերջիններս այժմ էլ ունեն այդ իրաւունքը։

Մելեան ասում է, թէ առաջնորդը թեմական դպրոցի ուսուցիչներից կը կազմէ մի ժամանաժողով, որին կը նախագահէ ինքը եւ որը կը քննէ տիրացուին։ Դարձեալ կարգադրութիւնը, իրաւունքը տրվում է չահ ունեցող կողմին։ Թեմական դպրոցների վերատեսուչները, ասում է Մելեան, առաջնորդներն են։ (Ուշադրութիւն դարձրէք այս արտացու, կրթասէր քահանայի հայեացքի վրա...)։ Նշանակում է, ուրեմն, որ չահ ունեցող կողմը այս դէպքում էլ, իբրեւ գլխաւոր, իբրեւ արձակելու եւ ընդունելու իրաւունք ունեցող մարդ, նոյնն է, ինչ որ կօնսիստորիայում եւ առանց նրա հաճութեան ոչինչ չէ կարող տեղի ունենալ։ Կարեւոր էր, ուրեմն, որ կարգադրողը, հարց վճռողը չը լինի նա, ով չահ ունի, որ տգէտ քահանաներ շատ լինեն։ Արիստակէս եպիսկոպոսը կամեցել է մի չէզոք տեղ դնել, առաջնորդների ազդեցութիւնից եւ անմիջական իշխանութիւնից ազատ մի միջնավայր, ուր կարելի կը լինէր իսկական հարցաքննութիւն կատարել։ Այդ տեղը նա համարել է էջմիածնի ճեմարանը։ Եւ անկասկած նրա տեղը չէ, որ Մելեան քահանան չէ հասկանում այս բոլորը։ Իսկ մենք, ընթերցող, կարող ենք այդ կամ թէ ակամայ անհասկացողութեան վրա զարմանալ։—Երբէք։ Հօ քիչ առաջ մենք տեսանք, որ նա կուրծք էր ծեծում, թէ Արիստակէս եպիսկոպոսը իրաւունք չունէր քննել եւ պատժել Սագարէջօի անզգաստ քահանային, քանի որ սա հարցաքննվել եւ արժանաւոր է համարվել մի ուրիշ առաջնորդի կողմից։ Մարդը միանգամայն զոհ է իր դասակարգի այժմեան դրութիւնից. ինչ պիտի ասէք. հօ չէք կարող հարկադրել, որ նա իր այդ համոզմունքը դէն գցէ։ Քէֆը կան մեզանում, որոնք այդպէս են մտածում։—Հարիւրներ, հազարներ. ինչ մեղք, եթէ Մեսրոպ քահանան էլ մի միաւոր լինի այդ թւի մէջ։ Երբ դուք տեսնում էք մի մարդու, որ պատրաստ է, Արիստակէս եպիսկոպոսին հակառակված լինելու համար, պաշտպանել նոյն իսկ անգրագիտութիւնը, ուրիշ ինչ կարող էք անել, եթէ ոչ ձեր ուսերը վեր քաշել...

Միայն այդ անմիտ հակառակասիրութիւնն է պատճառ, որ Մելեան քահանան չարաբնակ կսկիծ է յայտնում (եր. 20—21, 117) թէ Արիստակէս եպիսկոպոսը չէ խնայել ոչ մեռածներին եւ ոչ ժամանակակիցներին, երբ կամեցել է մերկացնել վատութիւնները։ Էլ չէ կարողանում հասկանալ խեղճ քննադատը, որ դա, յամենայն դէպս, մի շատ պատուաւոր հանգամանք է Արիստակէս եպիսկոպոսի համար։ Որ ինքը, Մեսրոպ քահանան այդպիսի բան երբէք չէր անի, այդ անկասկած է։ Բայց Մեսրոպ քահանաների լեգէօնն է, որ Արիստակէս եպիսկոպոսին դարձնում է բախտաւոր բացառութիւն, երեւոյթ։ Ահա նա հրատարակել է փաստեր, դօկումենտներ, տուել է անուններ։ Ի՞նչ են ասում այդ բոլորի դէմ։—Ոչինչ. միմիայն ողորմելի հեծկլտանքներ են բարձրացնում։ Մելեան իր պաշտպանութեան տակ է առնում անցած կաթողիկոսներին. ասում է թէ դրանք դպրոցական գործին ոյժ են տուել։ Բայց հարցը արդեօք դպրոցական գործի մասին է։—Ոչ, խօսքը միայն քահանայական հարցին է վերաբերվում։ Այդտեղ արդէն Մելեան կարողանում է այսպիսի խղճուկ խօսքեր արտասանել. «Բայց որ այդ ընդհանրական, այդ հրապարակի վրա դրված կարգադրութիւնների տակ միաժամանակ կատարվել են խաթրապահութիւններ, խնամութիւններ, զիջողութիւններ, խոտորումներ—շատ հին, ժառանգական, հանրական մարդկային հիւանդութիւն է, որ ամեն դարում եւ ամեն ազգի մէջ արդեալք է եղել եւ պիտի լինի մասնաւոր առմամբ» (42)։ Գրաւ-գնաց, այսպէս եղել է, այսպէս էլ կը լինի, հէր-օրհնածներ, ինչ էք անհանգիստ լինում...

Իսկ ժամանակակիցների վերաբերմամբ Մելեան այն ունի ասելու, թէ Արիստակէս եպիսկոպոսը կամեցել է այդ մերկացումներով իր անձնական հաշիւները տեսնել։ Այդպէս։ Այդ խօսքերով, տէր հայր, իրաւունք չէք տալիս մեզ էլ կարծելու, որ դուք էլ ձեր հաշիւներն էք ունեցել, հրատարակելով ձեր գիրքը։ Հօ գիտէք, թէ որպիսի հաճութիւն պիտի զգան կառավարող եւ ղեկավարող շրջանները ձեր թէկուզ անհիմն, անարդար յարձակումներից։ Ինչպէս էք կարծում, հաւատանք, որ այդպէս է։ Դուք, ի հարկէ, վրդովվում էք այս տեսակ մտքից։ Ուրեմն իմացէք, որ եթէ մենք ասում ենք այս բանը, պատճառն այն է, որ ցոյց տանք ձեզ, թէ որքան անազնիւ, անբարեխիղճ միջոցի էք դիմում դուք, յանձն առնելով ուրիշի սրտինը կարդալու դերը...

Անմիտ հակառակասիրութեան մի ապացոյց էլ։ Ատարախանի կօնսիստորիան «Մշակի» մէջ տպված յայտարարութեամբ քահանայացուներ է հրաւիրել թեմի համար։ Մեսրոպ քահանան վրդովվել է «այս աչքի ընկնելու չափ նորութիւնից»։ Մի եւ նոյն զարմանքը պատել էր եւ «Արարատի» խմբագիրներին։ Ինչու։ Ատարախանը հայութիւնից հեռու գտնվող մի տեղ է, չունի թեմական դպրոց, իսկ նրա թեմը ունի

պատճառով անբախտացել են, քանի-քանի երիտասարդ կանայք, աղջիկներ բռնի առեւանգվել են եւ, չը դիմանալով անպատուութեան, ժահուամբ վերջ են տուել իրանց կեանքին. քանի-քանի կանայք, որոնց մէջ ապրելու ցանկութիւնը զօրեղ է եղել ամօթի զգացմունքից, տեսնելով որ պատուել է ամօթխածութեան վարագոյրը, ակամայ իրանց անառակութեան գիրկն են ձգել՝ մի կտոր հաց ճարելու եւ ապրելու...

Այստեղ արդէն մենք լռում ենք. մեր բոլոր ասածներին ապացոյց թող փաստերը խօսեն

1) Սառնա գիւղում երկու պատուաւոր կանայք, որոնց ամուսինները պանդխտութեան էրն գնացել, բռնի, գիշերով, առեւանգութեան են ենթարկվում եւ երբ տեսնում են, որ անկարող են ծածկել իրանց ակամայ յանցանքի ամօթալի պտուղը, թոյն են ընդունում, որոշած լինելով մահուամբ փրկելու իրանց պատիւը։

2) Մահլամ գիւղացի Կ. Խանդեալդեանի կինը, իր ամուսնու Ռուսաստանում պանդխտութեան եղած ժամանակ, ստիպված է լինում ամօթալի յարաբերութիւններ ունենալ ենիչերիներից երկուսի հետ։ Ամուսինն այդ լուրն առնելով՝ չտապում է Սալմաստ ընտանիքի պատիւը վերականգնելու. բայց տեսնելով, որ կընոջն իր ճանապարհից յետ դարձնելն անկարելի է, կսկծից ինքնասպանութեան է դիմում։ Այդ դէպքից յետոյ յիշեալ երկու ենիչերիների մէջ կռիւ է ծագում կնոջ պատճառով. նրանցից ամեն մէկը պնդում է, թէ կինն իրան աւելի է սիրում եւ ուրեմն միայն իր զուարճութեան համար պէտք է ծառայէ։ Բանն այնտեղ է հասնում, որ նրանք կնոջը քաշ են տալիս գիւղի մէջտեղ եւ ժողովրդի առաջ ստիպում են խոստովանվելու, թէ ումն է աւելի սիրում։ Կինը ընդունում է նրանցից ուժեղին. հակառակորդը այդ անարգանքը տանել չէ կարողանում եւ դաշոյնի մի քանի հարուածքով տեղնուտեղը սպանում է կնոջը. սկսվում է աղմուկ ու կռիւ. կառավարութիւնը տեղեկանում է եղելութեան մասին, բռնում է գիւղացիներին եւ տուգանքի է ենթարկում։

3) Ենիչերիներից մէկը ամուսնանալու յոյսերով խաբում է Ն—րի կնոջը՝ Ա-ին (մահլամցի) եւ յարաբերութիւն սկսում. իսկ երբ կինը նրա աչքում կորցնում է իր զուարճութեան առարկայ դառնալու յատկութիւնը, առանց խղճահարվելու նա նրան դուրս է շպրտում, որից յետոյ վերջինս բացարձակապէս սկսում է անառակութեամբ պարապել։

4) Մհ. Դաւթեան Անանեան (մահլամցի) փորձում է ենիչերիների դէմ քարոզել. բայց մի քանի անգամ իր կեանքը գոմերում եւ մարագներում վտանգից ազատելուց յետոյ գլուխն առնում է ու կորչում Սալմաստից։ Մինչեւ անգամ նրա եղբայրներն էլ պանդխտութիւնից չեն կարողանում տուն վերադառնալ մշակելու իրանց անտէր մնացած կալուածները, որովհետեւ մեր հերոսների սպառնալիքները նրանց էլ են հասել։

5) Մահլամի խմբակի անդամներից մէկը մի օր Հաֆթուանով անցնելիս մտնում է գիւղացիներից մէկի՝ Կապուտեան Ղազարի տունը, ձին կապում է բակում, պահանջում է, որ մի խուրձ խոտ դնեն ձիու առաջ, իսկ իրան ճաշ տան. Ղ-ը կատարում է նրա պահանջը, որից յետոյ Դ. թողնում եւ հեռանում է։ Լուրը հասնում է Հաֆթուանի խմբակի ականջին, որի հերոսներից մէկը այդ անպատուութիւնը մաքրելու համար, երեկոյեան դէմ զինված մտնում է Ղ-ի տուն եւ պահանջում է կամ տանտիրոջը, որ այդ ժամանակ, բարեբախտաբար, տանը չէր, իրան յանձնելու, որ տեղն ու տեղը սատկեցնէ, կամ 50 թուման առձեռն դրամ, պատրուակելով միաժամանակ, թէ իրանց հասցէին անպատիւ խօսքեր են ուղղված։ Գիւղացիները մէջ են մտնում, աղաղակում, պաղատում, եւ գործը 35 թումանով վերջացնում են։

Անմեղ Ղ-ը պարտքով վճարում է ցանկացած գումարը, յուսալով, որ այդքանով էլ գործը կը վերջանայ։ Բայց, ի հարկէ, նա սխալվում էր. Մահլամի խմբակը այդ տանել չէր կարող։ Միւս օրը գիշերով նա մտնում է Հաֆթուան եւ յարձակվելով տեղացի խմբակի վրա՝ սպանում է նրա անդամներից մէկին։ Տեղեկանում է այդ մասին կառավարութիւնը եւ բռնում է փոքր ի շատէ դիրք ունեցող գիւղացիներին եւ, պատճառելով թէ սպանութիւնը ձեր գիւղումն է կատարված, ենթարկում է նրանց 300 թուման տուգանքի։ Հաֆթուանի խմբակը վճռում է իր ընկերոջ վրէժը լուծել ինչպէս Մահլամի խմբակից նոյնպէս եւ Ղ-ից։ Վերջինս լսելով այդ՝ թողնում է տուն, տեղ, ընտանիք, թողնում է դաշտում իր կիսատ կալը, թողնում է ամեն ինչ եւ իր կեանքն ազատելու համար փախչում է Ռուսաստան...

6) Հաֆթուանցի Ֆ—եան Ս. յանդգնել էր միանգամ նրանց իրանց իսկական անուամբ—սրիկայ կոչելու. այդ մի խօսքի համար նա այս օտարութեան մէջ կեանք է ժաչում, հնարաւորութիւն չունենալով հայրենիք վերադառնալ, ուր նա իր սեփական միջոցներով ազատ կարող է ապրել։

Լրագրի էջերը չեն թոյլ տալիս մեզ երկար շարունակելու այս փաստերը...

Է. Զարեւանդեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻ
(Նամակ Կարսից)

—

Մայիսի 28-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի քրէական բաժինը եկաւ Կարս մի քանի գործերի համար։ Նախագահում էր սենատոր պ. Վրասսկի, ժամանակցութեամբ պ.պ. Սօմովի եւ Օպտօվցեվի. մեղադրում էր պրօկուրոր պ. Լեմմերման։ Դահլիճի մուտքը տոմսակներով էր։ Առաջին գործի մէջ մեղադրվում էր Երեւանեան Նահանգի Սուրմալու գաւառի պրիստաւ պ. Սամարկին հետեւեալ յանցանքի մէջ։

1899 թ-ին Կարա-Գոյունլու գիւղում Շիւքիւր անունով մի թուրք, բռնաբարելով 12 ամեայ մի աղջկայ, պատճառ է դառնում նրա մահվան։ Գործը հասնում է իշխանութեանը եւ նախնական քննութեան համար նշանակվում է վերոյիշեալ պրիստաւը։ Գալով գիւղը՝ պրիստաւը քննութեան է ենթարկում մարդկանց ներկայութեամբ մեղադրվող եւ արդէն բանտարկված Շիւքիւրի վարտիքը, որի վրա կասկածելի հետքեր են եղել. արձանագրութիւն է կազմում այդ մասին եւ, ներկայ եղող գրագէտներին ստորագրել տալով, փաթաթում է վարտիքը թղթի մէջ եւ պահում։ Գիշերը մընում է գիւղում եւ հետեւեալ օրը, ոչնչացնելով արձանագրութիւնը եւ վերադարձնելով վարտիքը իր տիրոջը, գնում է Իգդիր, պատուիրելով այնտեղ տանել բանտարկված յանցաւորին։

Շիւքիւրի դատի ժամանակ վկաները հաստատում են արձանագրութեան գոյութիւնը ու նրա յանցանքը բռնաբարութեան մէջ եւ դատարանը իր ժամանակին դատապարտում է նրան 12 տարվայ տաժանակիր աշխատանքի։ Որովհետեւ գործի մէջ չէ ներկայացրել պրիստաւը վերոյիշեալ արձանագրութիւնը եւ վարտիքը, նրա անմիջական իշխանութիւնը ենթարկել է նրան դատի, մեղադրելով նրան յանցաւորին արդարացնելու եւ կարեւորութիւն ունեցող իրական ապացոյցը չը ներկայացնելու մէջ։

Կանչված վկաները, բացառութեամբ աղջկայ մօրը, ցոյց տուին, որ այդ տեսակ արձանագրութիւն չէ եղել կազմված (թէեւ նրանք ամենքն էլ հակառակ ցուցմունք էին տուել թէ քննիչին եւ թէ Շիւքիւրի դատի ժամանակ) եւ որ վարտիքը պրիստաւը,—իրանց ներկայացնելուց եւ համոզվելուց յետոյ, որ արիւնի ոչ մի հետք չը կայ նրա վրա, այլ նկատվում են միմիայն ուրիշ, դեղին գոյնով կեղտեր,—փաթաթեց թղթի մէջ, ձգեց ներքեւ եւ ապա տուեց ծառային յանձնելու մեղադրեալին ու ինքը վերադարձաւ, պատուիրելով տանել եւ բանտարկել չարագործին։

Մինչեւ անգամ վկաներից մի թուրք առարկում էր, որ այդ դատը բոլորովին անհիմն է եւ հետեւանք է գաւառապետ Բօգօսլավսկու եւ պրիստաւ Սամարկինի վատ յարաբերութիւնների, որի պատճառն այն է, որ վերջինս չէր համաձայնվում առաջինի զանազան կեղտոտ գործերին մասնակցել։

Պրօկուրոր պ. Լեմմերման իր մեղադրանքի մէջ հիմն ընդունելով վկաների նախկին ցուցմունքները եւ նրանց սովորութիւնը, որ փոխանակ ճշմարտութեան ծառայելու, այս կամ այն դիտումով աշխատում են յանցանքը ծածկել, հիմնվելով այն բանի վրա, որ եթէ իրական ապացոյցը մի կարեւոր բան չը պարունակէր իր մէջ, պրիստաւը խնամքով չէր փաթաթի եւ պահի եւ նաեւ մի շարք հաւանականութիւնների ու ենթադրութիւնների վրա, պաշտպանում էր իր մեղադրանքը եւ առաջարկում համապատասխան պատիժ տալ մեղադրեալին՝ 12 տարվայ տաժանակիր աշխատանքի արժանի յանցանքը թագցնելու համար։

Մեղադրեալի արքունի նշանակված փաստաբան երդուեալ հաւատարմատարի օգնական պ. Տէր-Մարտիրոսեանը, հիմնվելով վկաների ներկայ ցուցմունքների վրա եւ հաստատելով, որ չարագործ Շիւքիւրին դրամական այնպիսի միջոցների տէր չէր, որ կարողանար պրիստաւին կաշառել այդ տեսակ յանցանք գործելու համար եւ մատնանիշ անելով, որ առանց դրական փաստերի, լոկ հաւանականութիւնների եւ ենթադրութիւնների հիման վրա, չէ կարելի մէկին մեղադրել այդ տեսակ ծանր յանցանքի մէջ եւ պատժել, խնդրում էր արդարացնել իր պաշտպանեալին։

Դատարանը հեռացաւ խորհրդակցելու եւ 1/2 ժամից յետոյ դուրս բերեց արդարացնող վճիռ։

Երկրորդ գործում մեղադրվում էր Երեւանեան նահանգի Ալէքսանդրօպոլ գաւառի գիւղական պրիստաւ Պլեխանով, որ 1900 թ. պաշտօնավարութեան միջոցին մի հայ գիւղում հրամայել է ծեծել գիւղացիներից մէկին։ Որովհետեւ մեղադրվողը խոստովանեց, որ, ստիպված գիւղացու վիրաւորական եւ գրգռող վարմունքից, հրամայել է իր մօտ գտնված ոստիկանին ծեծել գիւղացուն, ուստի եւ ոչ մի վկայի հարցաքննութեան չենթարկեցին։ Աչքի առաջ ունենալով այս հանգամանքը եւ համաձայնվելով մեղադրվողի հետ, որ գիւղացին տեղիք է տուել այդ բանին իր վարմունքով, պրօկուրորը խնդրեց դատարանից ամենաթեթեւ պատիժ նշանակել մեղադրեալին։

Դատարանը ենթարկեց պ. Պլեխանովին 5 բուբլի տուգանքի։

Հ. Նոհրատեան

բազմաթիւ անհաներ, վաճառականական հայ գաղութներ, որոնք ցրված են Անդրկասպեան երկրում, Միջին Ասիայում, Հիւսիսային Կովկասում։ Մի ուրիշ առաջնորդ շատ ուրախ կը լինէր, որ այդպէս է. նա քահանայ կը ձեռնադրէր ամեն մի պատահածին. փառք Աստուծու, այդպիսի պատահականները աւելի լաւ են վրճարում, իսկ խօսք ընկած տեղը նա կասէր թէ ինքը մեղաւոր չէ, որովհետեւ ցանկացողներ չը կային։ Բայց երբ մի առաջնորդ աջահամբոյրի հարցով չէ հետաքրքրվում, այլ կամենում է, որ իր հեռաւոր, մեծ մասամբ գաղթականութիւններից բաղկացած թեմում լինեն արժանաւոր քահանաներ, միթէ մեղք գործած կը լինի, եթէ լրագիրների միջոցով հրաւիրէ կարող անձանց իրանց ծառայութիւնը մատուցանել ժողովրդին, ստանձնելով քահանայի պաշտօն։

Մեսրոպ քահանայի համար, որ ձեւականութեան մարդ է, որ ս. Բարսեղների գաղափարներով է ապրում, դա կը լինի մեղք։ Բայց մի սրտացաւ առաջնորդի համար, որ գործով է ուզում ցոյց տալ իր սրտացաւութիւնը եւ ոչ թէ պաշտօնական թղթերի մէջ բոլոր սահմանված դիւանական անմեղութիւնները պահպանելով, դա մեղք չէ եւ չէ կարող լինել։

Մելեան ասում է, թէ այդ միջոցով քահանաների ընտրութիւնը ընկնում է կօնսիստորիաների եւ առաջնորդների ձեռքը։ Ունի՞ նա փաստեր Աստրախանի առաջնորդի վերաբերմամբ։—Ո՛չ։ Ապա ինչ մտքով է առաջ բերված այս մեղադրանքը...

Թողնենք, տէր հայր, կեղծաւորութիւնը։ Այժմեան ժամանակ առաջնորդները, կօնսիստորիաները ոչինչ ժամանակցութիւն չունեն քահանաների ընտրութեան մէջ։ Կարող էք ասել, որ քահանաների 9/10 մասը առաջնորդները չեն ընտրում։ Չէք կարող ասել։ Դուք էլ գիտէք, թէ ինչպէս են ընտրվում մեր քահանաները եւ դուք չէք բողոքում այդ կարգի դէմ, քանի որը ձեր բողոքը ուղղված է այն մարդու դէմ, որ միշտ բողոքաւոր է եղել։ Ձեզ համար նրանք, որոնք ծածուկ, իրանց գրպանի օգուտը պաշտելով են քահանաների ընտրութեան գործը իրանց ձեռքն առնում, անմեղ դառնուկներ են, իսկ նա, ով ծածուկ չէ անում, ով իր թեմի կարիքները հրապարակով է յայտնում եւ անձնուէր ծառայողներ է հրաւիրում, դատապարտութեան արժանի է...

Ո՞րտեղից սովորեցիք այսքան արդարադատ լինել։ Մենք ինքներս ժողովրդի իրաւունքների պաշտպան ենք, կուել ենք այդ իրաւունքների համար եւ պիտի կուենք։ Բայց չենք հասկանում, թէ ինչու՞ պիտի վրդովվել, երբ քահանաներ հրաւիրելու գործը, Աստրախանի պէս բացառիկ հանգամանքներում գտնվող մի թեմում, կենտրոնանում է թեմական ատեանում։ Այդ ատեանին է յայտնի, թէ որ տեղերի համար են հարկաւոր քահանաներ. նա, երեւի, մերժել է շատ անարժան տիրացուներին եւ նրանից, երեւի, պահանջում են արժանաւոր քահանայացուներ։ Եւ նա հաւաքում է տեղեկութիւններ, առաջարկում է թեկնածութեան արժանիներին այս կամ այն տեղի ծխական ժողովին, որից արդէն կախված է ընտրելու կամ չընտրելու իրաւունքը։ Ի՞նչ վատ բան է սա, ինչ ժողովրդական իրաւունքների բռնաբարում կարող է լինել այստեղ։ Քանի որ քահանաների ընտրութիւնը ներկայ հանգամանքներում ամենամեծ մասով զանազան գիներավաճառների, չարչիների, վաշխառուների ձեռքում է գտնվում, աւելի լաւ չէ՞, որ այդ ընտրութեան ղեկավարողը լինի պարտաճանաչ, անշահասէր առաջնորդը։ Մելեան քահանան սարսափելի կերպով վախենում է առաջնորդներից եւ ուզում է, որ այդ կարեւոր պաշտօնեաները լինեն լոկ մեքենաներ, պաճուճապատանք, խրտուիլակ միայն։ Մենք այդպէս չենք նայում. առաջնորդներից մենք պահանջում ենք գործունէութիւն, հոգատարութիւն, եռանդ։ Եւ եթէ մենք Մելեանի պէս չենք վախենում, պատճառն այն է, որ չենք դաւանում նրա այն սկզբունքը, թէ վատ չը պէտք է գրել ոչ մեռածների, ոչ ապրողների մասին։ Սովորեցէք պահանջել, սովորեցէք գործի եւ ոչ թէ մեռած տառի, անհոգի ձեւականութեան մարդ դառնալ. թողէք հին, փտած գաղափարները, եղէք չիտակ, անվախ մարդ, եւ դուք հարկադրված չէք լինի հաճոյանալու, սրա ու նրա սիրտը շահելու համար լուռ ու մունջ մնալ... Իսկ ուր կայ խիստ պահանջ, անողորմ քննադատութիւն, այնտեղ ձեր կարծածի չափ երկիւղալի չեն լինի առաջնորդները...

Առհասարակ, Մելեան քահանան ջանք է գործ դնում հաստատելու, թէ Արիստակէս եպիսկոպոսը չէ ճանաչում ընտրողական սկզբունքը, թէ նա քահանաներ եւ քահանայացուներ նշանակելու կողմնակից է։ Փաստեր, ինչպէս միշտ, չը կան. դրանց փոխարինում են դատողութիւնները, ծակ փիլիսոփայական եզրակացութիւնները։ Ինչու՞ եւ ո՞ւմ համար են դրանք գրված։ Ո՞վ է ասում քահանան նշանակովի պիտի լինի, ո՞վ է կարօտ այդ հասարակ ճշմարտութիւնների ապացոյցներին։ Եթէ մեր մէջ արդէն կարգ է դառնում նշանակովի քահանաներ բազմացնելը, դրա պատճառը Արիստակէս եպիսկոպոսը չէ։ Շատ ճիշդ է, քահանայացուն պիտի ընտրվի ժողովրդից, պիտի ուսնենայ իր ծուխը։ Մեզանում արհամարհվում է այդ սկզբունքը։ Բայց ովքեր են եղել արհամարհողները։ Այդպիսիներից մէկը հէնց ինքը, Մելեան քահանան չէ՞։ Վերջին 20—30 տարվայ պաժութեան մէջ կարծեմ միայն մի դէպք է եղել, երբ մէկը քահանայ է ձեռնադրվել ոչ թէ ժողովրդի համար, այլ քահանայութեան հետ անմիջական կապ չունեցող մի պաշտօնի համար։ Եւ այդ մէկը եղել է Մեսրոպ քահանան։ Որքան մենք դիտենք, նա ծխի վրա չէ ձեռնադրված, այլ քահանայացել է լոկ թեմական տեսուչ դառնալու համար։ Սա մի զանցառութիւն է այն միանգամայն ճշմարիտ սկզբունքի դէմ, թէ քահանային պիտի ընտրէ ժողովուրդը։ Կայ եւ երկրորդ զանցառութիւնը։ Մեսրոպ քահանան ասում է. «Մի քահանայի առնել իր եկեղեցուց տանել մի այլ եկեղեցի՝ նոյնն է, ինչ որ մի փեսայի առնել իր հարսից եւ տանել տալ այլ հարսի։» «Այսպէս, ուրեմն, քահանայի ընտրութիւն չը կայ», դրական կերպով յայտարարում է Մելեան (եր. 109)։ Շատ գեղեցիկ, միանգամայն համաձայն ենք։ Բայց չէ՞ որ դուք արդէն քահանայ էիք, երբ ձեզ ընտրեցին Բաթումի քահանայ։ Եթէ ժողովուրդը չէր հասկանում, ինչու՞ ինքներդ յանձն առաք այդ պաշտօնը։ Սկզբից եւ եթ ձեր քահանայութիւնը եղել է բոլոր կարգերի, սկզբունքների ոտնակոխութիւն։ Եւ այնու ամենայնիւ, դուք ձեզ շատ լաւ էք զգում եւ դեռ պահանջներ էլ էք անում։ Եթէ դուք, որ դեռ հասկացող քահանայ էք, այդպէս էք վարվում ձեր պաշտած սկզբունքների հետ, ինչ պէտք է սովորէ ժողովուրդը։ Խօսքը առանց գործի մեռած է։ Սա հօ շատ հին ճշմարտութիւն է...

Մենք Մեսրոպ քահանայի այս անձնական գործերի վրա կանգ չէ՛ինք առնի, եթէ նա ինքը իր գրքի մէջ առաջնակարգ նշանակութիւն տուած չը լիներ անձնական գործունէութեան։ Արիստակէս եպիսկոպոսի աշխատութեան մէջ նա չէ տեսնում կամ չը տեսնելու է դնում ողբալի իրողութիւնը, այդ իրողութեան մասին չէ ցաւում, այլ շարունակ զբաղված է այն հարցով, թէ ինչ է արել ինքը, Արիստակէս եպիսկոպոսը։

Այդ էլ տեսնենք։

(Ը՛ը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, մայիսի 30-ին

Աւելի քան 20 տարի չարքաշութեամբ, հազար ու մի նեղութիւնների ենթարկվելով, նիւթական զրկանքներ կրելով՝ ծառայել եմ իմ մայրենի բեմին եւ այդքան ժամանակամիջոցում ոչ ոք չէ համարձակվել ինձ այնպէս վիրաւորել, ինչպէս պ. Շիրինեանը, անտեղի նկատելով, որ իբրեւ թէ ես այս տարվայ իմ ներկայացման տոմսակները «խայտառակ կերպով եմ վաճառել», սակայն ազնուութիւն չունի ասելու, թէ որոնք են այդ խայտառակ միջոցները։ Ճիշտ է, ինձ համար աւելի քան հաճելի կը լինէր, եթէ ես, առաքիրոք տանս հանգիստ նստած, միմիայն կասայում ծախվէին տոմսակները. բայց որովհետեւ փաստերով համոզված եմ, որ լեգէօն է այնպիսիների թիւը, որոնք ձրիաբար հայոց թատրոն են գալիս եւ որոնք տասնեակ ռուբլիներ են չպրտում թղթախաղի կանաչ սեղանի վրա եւ ոչ մի կօպէկ մայրենի բեմին—այդ պատճառով ես ստիպված էի, գոնէ թատրոնի եւ այլ ծախքերը հոգալու համար, իմ ծանօթներիս չրջանում ցրվել եմ տոմսակները, որոնք, ինչպէս եւ միշտ, գոհ էին մնացել իմ տուած ներկայացումից։

Պ. Շիրինեան, եթէ ես մնայի ձեզ պէս թատրոնի «իսկական բարեկամների» յուսով, ապա ընդմիշտ պիտի մնայի քաղցած եւ ամեն մի բոպէ պիտի սպասէի, որ ահա տանտէրս, տան իրերս աճուրդի պիտի հանէ։

Օր. Վարդուհի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում կազմվել եւ արդէն հաստատվել է թատրոնական ընկերութիւն, որի փայերը արժեն 25 եւ 100 ռուբլի։ Ընկերութիւնը մտադիր է մշտական հայկական խումբ պահել Թիֆլիսում եկող աշնանից։ Գործի նախաձեռնութիւնը պատկանում է իշխանուհի Մ. Թումանեանին, որին եւ պէտք է դիմեն փայեր գնել ցանկացողները։

—

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան ցուցահանդէսի ժամանակ խելացի զուարճութիւններ կազմակերպելու նպատակով հիմնվում է մի ընկերակցութիւն մասնաւոր անձերից, որոնք իրանց դրամական բաժիններով մտադիր են կազմել խոշոր գումար եւ ծրագրել մի շարք լուրջ ձեռնարկութիւններ։

—

Մեզ հաղորդում են, որ այն անձինք, որոնք չտապել էին ամարանոցներ գնալու, շատ անբաւական են մնացել անձրեւների եւ ցրտի պատճառով։ Նրանց մի մասը նորից վերադարձել է Թիֆլիս։

—

Հռչակաւոր ծովանկար Ց. Այվազովսկին, ինչպէս յայտնի է, զաւակներ չունէր, որոնց կարողանար անցնել հանգուցեալի ազգանունը։ Ներկայումս տեղի ունեցաւ Բարձրագոյն հրաման, որով իրաւունք է տրվում Այվազովսկի ազգանունը կրել Ալէքսանդր Լատրիին, Ց. Այվազովսկու աղջկայ՝ Ելենա Իվանովնայ Ռիբիցկայի կրտսեր որդուն։ Այվազովսկու Ելենա անունով աղջիկը ամուսնացած էր բժիշկ Լատրիի հետ։

—

Կիեւի համալսարանի խորհուրդը տան եւ մէկ նիստերում քննեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրի առաջարկած հարցերը համալսարանական ռէֆորմի մասին։ Խորհուրդը այն եզրակացութեան եկաւ, թէ պէտք է ինքնավարութիւն տալ համալսարանական վարչութեան։ Անհրաժեշտ է համարվում ընտրել ռէկտորին, դէկաններին եւ պրոֆէսօրներին, վերացնել հօնօրանական սիստեմը եւ մեծացնել պրոֆէսօրների ռոճիկը մինչեւ 8000 ռուբլի. ուսումնարանական պարապմունքների վարելը ենթարկել ֆակուլտէտի կօնտրոլին, վերականգնել դօցէնտուրան, պահպանելով պրիվատ-դօցէնտուրան, 24 թոշակաւորներ պահել պրոֆէսօրութեան համար պատրաստվելու նպատակով, վերացնել պետական քննութիւնները, բարւոքել ուսումնարանական օժանդակիչ ձեռնարկները. զարգացնել գործնական պարապմունքները, վերականգնել համալսարանական դատարանը, թոյլատրել ուսանողների եւ ընկերական դատարանը եւ ուսանողական կազմակերպութիւնները։ Խորհուրդը յանձնաժողով ընտրեց 12 պրոֆէսօրներից այդ որոշումները մանրամասն ձեւակերպելու համար։

—

Մայիսի 27-ին, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, Գ. Լիանոզեանի նախագահութեամբ կայացաւ Մոսկվայի հայոց բարեգործական ընկերութեան տարեկան նիստը։ 1900 թւի հաշուից երեւում է, որ ընկերութիւնը Գասպարեան ապաստարանում պահել եւ խնամել է 17 հոգու։ Բացի դրանից տրված են ինն անձանց ամսական եւ 36 անձանց միանուագ նպաստներ 5-ից մինչեւ 85 ռուբլի։ Ընդամենը այդ թւին նպաստներ են տրված 58 չքաւորներին եւ ուսանողներին։ Ապաստարանի բոլոր դրամագլուխների գումարը հասնում է 90,308 ր. 2 կօպէկի։

—

«Турк. Вѣд.» լրագրին հաղորդում են, որ Պետերբուրգի ֆրանսիական դեսպանի միջնորդութեան համաձայն, պ. Էդուարդ Գարնիէին թոյլատրված է այցելել Տուրկեստանը չերամապահութիւնը ուսումնասիրելու համար եւ այդ նպատակով անցնել Անդրկասպեան երկաթուղով։

—

Ներկայ տարվայ հոկտեմբերի 28-ին, ասում է «Русск. Вѣд.» լրագիրը, կը լրանայ Լազարեան ճեմարանի եւ Պետերբուրգի հայոց եկեղեցու հիմնադիր Յովհաննէս Լազարեանի մահվան հարիւրամեակը։ Մոսկվայի հայերը մայիսի 27-ին մի ժողով կայացրին եւ վճռեցին յանձնաժողով կազմել հանգուցեալի յիշատակը տօնելու ծրագիրը մշակելու համար։

—

ՇՈՒՇՈՒՑ «Аргонавтъ» լրագրին հեռագրում են, որ կովկասեան զինուորական-նահանգական դատարանի ժամանակաւոր բաժանմունքը մայիսի 31-ին քննելով Մամէդ-Ալի-Հաջի Գալիմօղլուի գործը, դատապարտեց նրա մահվան պատժի կախաղանի միջոցով։ Մամէդ-Ալի մեղադրվում էր այն բանում, որ նա անցեալ տարի Շուշի քաղաքի մօտ, պօստային ճանապարհի վրա, կողոպտեց նահանգական բժիշկ Բրանդտին եւ ուրիշներին։

—

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեզ գրում են, որ տեղական ժողովուրդը մտադիր է դիմել ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, խնդրելով արական եւ իգական պրոգիմնազիա բանալ իրանց աւանում։

—

ԿԻՍԼՕՎՕԴՍԿԻՑ մեզ գրում են, որ այնտեղ սեզոնը սկսվելու էր յունիսի 1-ից։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ս. Խաչ վանքի վանահայր Վահան վարդապետը, պաշտպանելով վանքի դատը, պահանջում է քաղաքից եւս 60 դեսեատին հող, այնպէս որ, եթէ քաղաքը համաձայնվի, վանքը կունենայ 400 դեսեատին հող։ Ի սրտէ ցանկանում ենք Վահան վարդապետին աջողութիւն, մանաւանդ որ նա միւս վանահայրերին չէ հետեւում եւ պիտի բարեկարգէ մեր վանքը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԷԼԳԻԱՑԻՑ

—

Բրիւսէլ, մայիսի 10/23-ին

Բրիւսէլի համալսարանները

Մեր եւրոպական ուսանողների մեծամասնութիւնը միշտ ձգտում է դէպի Գերմանիա եւ Շվէյցարիա, մոռանալով Բէլգիան, մանաւանդ Բրիւսէլը, ուր կան ամեն տեսակ յարմարութիւններ ուսանողի համար։ Բրիւսէլի համալսարանները, ուր դասախօսում են յայտնի պրոֆէսօրներ, ոչնչով պակաս չեն գերմանական կամ շվէյցարական համալսարաններից։ Բրիւսէլի հարուստ մատենադարանը (Bibliothèque Royale), մուզէյները եւ այլն շատ նիւթեր կարող են մատակարարել ուսողին։ Վերջապէս կեանքն էլ այստեղ, համեմատելով միւս եւրոպական մայրաքաղաքների, ինչպէս, օրինակ, Պարիզի կամ Բերլինի հետ, սուղ չէ։

Այժմ մի երկու խօսք ասեմ այստեղի համալսարանների մասին։ Այստեղ կան երկու համալսարան, մէկը Université libre (Ազատ համալսարան), միւսը՝ Université Nouvelle (Նոր համալսարան)։

Այս համալսարաններից առաջինը՝ Ազատ համալսարանը՝ հիմնել են 1834 թւին Բրիւսէլի ազատամիտ կուսակցութեան պարագլուխները եւ նա պետութեան կողմից ճանաչված է պաշտօնապէս ու այժմ գտնվում է լուսաւորութեան մինիստրի հսկողութեան ներքոյ։

Բայց այդ համալսարանը կոչվում է Ազատ համալսարան եւ հետեւեալ պատճառով։ Բէլգիայի Լուվէն քաղաքում կաթոլիկները հիմնել էին մի համալսարան, որը մինչեւ այժմ էլ գոյութիւն ունի, եւ ուր ընդունում էին միայն կաթոլիկ ուսանողներին, որոնք աւարտելուց յետոյ լաւ պաշտօններ էին ձեռք բերում պետութեան մէջ, մինչդեռ միւս համալսարանների շրջանաւարտները (մանաւանդ բողոքականները) ասպարէզից հալածվում էին։ 1834 թւին Բրիւսէլի ազատամիտ կուսակցութեան պարագլուխները հիմնեցին մի նոր համալսարան, ուր ընդունում են ամեն ազգի եւ ամեն դաւանութիւնների պատկանող ուսանողներին եւ այդ պատճառով նա կոչվեց Ազատ։

Այդ համալսարանի հիմնադիրներից նշանաւոր է Verhaegen, որ կտակել է համալսարանին հարիւր հազար ֆրանկ։ Համալսարանի բաղում գտնվում է նրա արձանը։

Այնուհետեւ 1873 թւին հիմնեցին «Ecole politechnique», որը կազմում է Ազատ համալսարանի մէկ ճիւղը։

Ազատ համալսարանը, բացի այդ ճիւղից, ունի հետեւեալ բաժանմունքները՝ փիլիսոփայութիւն, գրականութիւն ու պատմութիւն, իրաւագիտութիւն, բնական գիտութիւններ ու մաթեմատիկա, բժշկականութիւն եւ հասարակական գիտութիւններ։

Նրանք, որոնք ունեն միջնակարգ դպրոցի վկայական, ամենաքիչը վեց դասարանի, այդպիսիները ազատվում են ընդունելութեան քննութիւնից, բացի Ecole politechnique-ից, ուր ընդունվելու համար պէտք է տալ ընդունելութեան քննութիւն մաթեմատիկայից։

Ազատ համալսարանի ուսանողների թիւը հասնում է 1600-ի։ Ուսանողների մեծամասնութիւնը տեղացի են. հայ ուսանողների թիւը շատ քիչ է, ընդամենը երեք հոգի։

Այժմ մի երկու խօսք ասեմ Université Nouvelle (Նոր համալսարանի) մասին։ Այս համալսարանը ընդամենը եօթը տարի է, որ գոյութիւն ունի։ Որովհետեւ Ազատ համալսարանը բոլոր դասակարգերին մատչելի չէ, համալսարանական ծախքերի շատութեան պատճառով (տարեկան մօտաւորապէս 400—450 ֆրանկ ծախք է պահանջում), ուստի Բրիւսէլի սոցիալիստները 1894 թւին հիմնեցին Université Nouvelle, կամ, ինչպէս նոյնպէս ասում են, բարձրագոյն կրթութեան միջազգային եւ ազատ դպրոց, որը մատչելի է բոլոր դասակարգերին (որովհետեւ տարեկան մօտաւորապէս 200—250 ֆր. ծախք է պահանջում)։

Այս համալսարանը թէեւ պետութեան կողմից պաշտօնապէս հաստատված չէ, բայց եւ այնպէս շրջանաւարտ ուսանողները ստանում են դիպլոմ։ Այդտեղ շատ դիւրութիւններ են տալիս ուսանողներին մանաւանդ, օտարերկրացիներին։

Նոր համալսարանը ունի նշանաւոր պրոֆէսօրներ, ինչպէս են Էդմոն Պիկար,—սենատի անդամ եւ խմբագիր «Pandectes Belges»-ի ու «Journal des Tribunaux»-ի,—որ դասախօսում է իրաւաբանական ֆակուլտէտում։ Յայտնի սոցիոլոգ Guillaume de Greef, համալսարանի ռեկտորը, դասախօսում է սոցիոլոգիա եւ քաղաքատնտեսութիւն։ Հռչակաւոր աշխարհագէտ Էլիզէ Ռըկլիւ դասախօսում է աշխարհագրութիւն։ Paul Ianson, սենատի անդամ։ Պետերբուրգի համալսարանի պրոֆէսօր Իսայեվ, որ յունիս եւ յուլիս ամիսներին Université Nouvelle-ում դասախօսութիւններ է կարդում. նոյնպէս եւ Հռոմի իրաւաբանութեան պրոֆ. յայտնի Enrico Ferri. յետոյ սոցիալիստ Emile Vandervelde, Paul Sollier, Charles Dejongh եւ այլն։

Այդպիսով Նոր համալսարանի նպատակն է բարձրագոյն կրթութիւնը մատչելի դարձնել բոլոր դասակարգերին, մանաւանդ աշխատաւոր (բանւորական) դասին ու այդպիսով ժողովրդականացնել գիտութիւնը։

Այս համալսարանում ընդունում են կանանց։ Ընդունելութեան համար քննութիւն չը կայ։

Նրանք, որոնք կը կամենան աւելի մանրամասն տեղեկութիւն ունենալ Նոր համալսարանի, ազատ համալսարանի եւ Ecole polytechnique-ի մասին, թող դիմեն ինձ հետեւեալ հասցէով, S. Galatchian. Rue de Fleurus № 7. Bruxelles (Belgique)։ Ցանկալի է, որ Եւրոպայի հայ ուսանողական միութեան կոմիտէն յայտնէր իր հասցէն եւ յանձն առնէր բաւարարութիւն տալու այն երիտասարդներին, որոնք մտադիր են գալու Եւրոպա, բացատրելով տեղական պայմանները, եւ այդպիսով ուսանողը երբ գալիս է Եւրոպա, վաղօրօք տեղեկութիւն ունենալով՝ կը դիմէ ուղղակի դէպի իր որոշած տեղը եւ քաղաքէ քաղաք թափառելուց խոյս կը տայ։ Պատահում է, որ երբեմն ուսանողը երեք տարի կորցնում է այլ եւ այլ համալսարաններ փոխելով, մինչեւ որ հաստատվում է մի որ եւ է քաղաքում։

Սամսոն Ղալաչեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կ. Պոլսից հեռագրում են «Hamburg. Nach.» լրագրին, որ Սալոնիկի նախկին վալի Հասան-փաշան ունկնդրութեան ընդունվեց սուլթանի մօտ։ Հասան-փաշան, ինչպէս ասում են, ամենամանրամասն զեկուցում ներկայացրեց սուլթանին բուլգարական պրօպագանդիստների մասին։ Այդ զեկուցման ազդեցութեան տակ սուլթանը հրաման արձակեց՝ ամենամեծ խստութիւն գործ դնել պրօպագանդիստների վերաբերմամբ։

—Յայտնի ամերիկական միլիոնատէր Ռօկֆէլլէր նորերս 200,000 դոլլար նուիրեց Պատեօրեան ինստիտուտ հիմնելու համար Նիւ-Եօրկում։ Ռօկֆէլլէր դիմեց ամերիկական բոլոր գիտնականների աջակցութեանը, խնդրելով նրանց օգնել իրան այդ ահագին ծրագիրը իրագործելու համար։

—«Standard» լրագրին Ռուսաստանից գրում են, որ «Ադմիրալ Կօրնիլով» շոգենաւի առաջին փորձնական ըէյսը դէպի Պարսից ծոցը չարդարացրեց նրա վրա դրված յոյսերը։ Զը նայելով կառավարչական ահագին օժանդակութեան, մինչեւ անգամ արտասովոր ֆրախտների էժանութեան ժամանակ, Ռուսաստանը ոչինչ չանսեր չունի բրիտանական առեւտուրը դուրս մղելու Պարսից ծոցից։

—Իտալական դեսպանը տեղեկութիւն է ստացել, որ Հինտիօլանդում (Հարաւային Մոնգոլիայում) սրի են առնված 15 հոգեւորականներ եւ նրանց հետ միասին չինացի—քրիստոնեաներ։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

31 *մայիսի*

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 31-ին Գալէրնի անուանված կղզու վրա, ժամը մէկին, հրդեհ բռնկվեց։ Կրակն երեւաց նաւահանգստային փայտէ նաւաշինարանում, որի մէջ կառուցվում էր «Վիտեազ» կրէյսէրը եւ սարսափելի ոյժով ու արագութեամբ տարածվեց փայտէ շինութիւնների եւ կղզու նիւթերի պահեստի վրա։ Կանչվեցին բոլոր հրդեհաշէջները եւ 5-դ ժամին աջողվեց կղզիացնել կրակը։ Վնասներն ահագին են։

ՊՐԷՏՕՐԻԱ։ Սվազիլանդի սահմանի վրա գերի են վերցված 26 բօէրներ, որոնց թւում Շալկ Բուրգէրի եղբայրը։

ՇԱՆԳՀԱՑ։ Հրատարակվեց հրովարտակ, որով հրամանագրվում է վերացնել կայսերական երկաթուղիական պաշտպանութիւնը։

ՏՕԿԻՕ։ Գերմանական դեսպանը ի պատիւ Վալդերզէէի նախաճաշ տուեց, որին ներկայ էին կայսերական պրինցները, մինիստրութեան անդամները եւ զանազան պետական գործիչներ։ Դեսպանը եապօնական կայսրի կենացն առաջարկեց. պրինց Ցուշիմ պատասխանեց գերմանական կայսրի կենացը խմելով. Վալդերզէէ «hoch» կանչեց եապօնական զօրքի համար, ամենամեծ գովասանքով խօսելով նրա մասին։

ԲՐԻՒՍԷԼ։ Տիկին Բօտա եկաւ այստեղ երէկ երեկոյեան. կայարանում դիմաւորեց նրան տիկին Լէյդա։ Տիկին Բօտա մի քանի օր կը մնայ այստեղ, որից յետոյ կերթայ Նախագահ Կրիւգերի մօտ։

ՇԱՆԳՀԱՑ։ Պրինց Ցունի միսսիան, որը Գերմանիա է ուղեւորվում գերմանական դեսպանի սպանութեան համար գերմանական կայսրին ցաւակցութիւն յայտնելու, կը հեռանայ Պէկինից երեւի յուլիսի վերջը, այնպէս որ աւագ քարտուղարի պարտաւորութիւնը կը կատարէ Ջժան-Կէն-Մաօ։

ՊՐԱԳԱ։ Կայսրը առաւօտեան ընդունեց հոգեւորականութեան եւ ազնուականութեան պատգամաւորութիւնները՝ Սկրիբէնսկի կարդինալի առաջնորդութեամբ, տեղական սէյմի նախագահներին՝ լանդմարշալի գլխաւորութեամբ եւ քաղաքային ներկայացուցիչներին՝ բուրգոմիստրի առաջնորդութեամբ։ Հոգեւորականութեան ողջոյնին կայսրը պատասխանեց սկսելով չեխերէն եւ շարունակելով գերմաներէն։ Կայսրը շնորհակալութիւն յայտնեց հաւատարիմ հպատակութեան եւ անձնուիրութեան համար։ Ճիշդ այդպէս էլ կայսրը սկսեց նախ գերմաներէն եւ չեխերէն, երբ ընդունեց ազնուականութիւնը եւ լսեց նրա ողջոյնը։

ՊԱՐԻԶ։ Գեներալ Վուարօն հեռագրում է մայիսի 30-ից, որ ֆրանսիական զօրքերը մաքրեցին Խուալու եւ Ջժէն-Դին-Ֆու։ Ջինական զօրքերը հանդիսաւոր կերպով, բոլոր մանդա-

րինների ներկայութեամբ, պատիւներ տուեցին ֆրանսիական դրօշակին։ Ազգաբնակութիւնը իրան շատ լաւ էր պահում։ Իշխանութիւնները շնորհակալութիւն յայտնեցին այն հանգստութեան եւ կարգի համար, որ ֆրանսիացիները ապահովեցին երկրում։

ՊՐԱԳԱ։ Քաղաքագլխի ողջոյնին, որ արտասանվեց չեխերէն եւ գերմաներէն, կայսրը պատասխանեց չեխերէն. «Այս երկրի հաւատարիմ բնակիչների միջեւ գտնվելու անկեղծ ցանկութիւնը բերեց ինձ իմ սիրեցեալ չեխական թագաւորութիւնը եւ արքայական Պրագա մայրաքաղաքը։ Մեծ հետաքրքրութեամբ ցանկանում եմ հաստատվել այն առաջադիմութեան եւ զարգացման մէջ, որ ձեռք է բերել հոյակապ Պրագան բոլոր բնակիչների աջակցութեամբ վերջին տասնամեակում։ Անապատ հետաքրքրութեամբ կը հետեւեմ եւ այն լուրջ խնդիրներին, որոնց դեռ լուծելու է ձեր համայնքը եւ միշտ ցոյց կը տամ դրանց իմ հայրական հոգացողութիւնը»։ Ապա կայսրը շարունակեց գերմաներէն. «Ձեր ողջոյնի սրտագին խօսքերի եւ հաւատարմութեան ու սիրոյ զգացմունքների համար յայտնում եմ ձեզ եւ Պրագայի բոլոր բնակիչներին իմ շնորհակալութիւնը եւ հաւատացնում եմ ձեզ, որ անփոփոխ են մնալու իմ շնորհները։ Ես հաւատացած եմ, որ հաւատարմութեան այդ զգացմունքները դէպի իմ անձը ընդհանուր են արքայական մայրաքաղաքի եւ ամբողջ երկրի բնակիչների համար։ Թող առաջադիմէ այդ ի հնուց պատուելի քաղաքը իր տնտեսական եւ կուլտուրական զարգացման մէջ եւ թող իր բոլոր բնակիչների համար լինի մշտական եւ անվտանգ պաշտպանութիւն հանգիստ կենսակցութեան եւ բարեյաջող զարգացման համար։

ՈՒԻՆ։ Գիշերը Սամարա-զլատուստան երկաթուղուց 134 վերստ հեռաւորութեամբ խորտակվեց գաղթականական դնացքը։ Մանր վիրաւորվածները երկուսն են. աւելի քիչ են վիրաւորված 24 հոգի։ Վնասվածներին օգնութիւն է հասցրված։

ՄՕՍԿՎԱ։ Այսօր նահանգական դատարանը հաստատեց Սօլոդօվնիկովի կտակը։ Ժառանգական գոյքը 21 միլիոնից աւելի է գնահատված։ Ազգականներին թողնված են աննշան մասեր. մնացածը, դրամի վերածելուց յետոյ, բաժանվում է երեք մասի. դրանցից երկու երրորդ մասը յատկացված է տարրական եւ արհեստագիտական դպրոցներ հիմնելուն Վոլոգդայի, Արխանգելսկի եւ Տվերի նահանգներում, մնացած երրորդ մասից 70,000 ր. յատկացրված է բարեգործական նպատակներին Սերպուխովում, իսկ մնացած գումարները—էժան բնակարաններին Մօսկվայում՝ ամենաբարձր վճարը նշանակելով 5 ռուբլի։ Թատրոնի շինութիւնը, որպէս ցեղական կալուածք, գատված է եւ կտակի այդ մասը չը հաստատվեց։ Տուրք առնված է 557 հազար ռուբլի։

Այսօր վերջնական ձեւով յայտնվում է գեղջկուհի Կուզնէցովայի գործի դատավճիռը, որը գողութեան համար դատապարտվում է երկու եւ կէս տարվան բանտարկութեան։ Այդ գործի քննութեան ժամանակ գեղջկուհի Կուզնէցովա, լսելով դատավճիռը, վերցրեց քարտուղարի սեղանից պրէսպապիէ եւ գցեց նախագահի երեսին։ Պրէսպապիէն չը դիպաւ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտարարում է, որ նրա ատեանում ներկայ տարվայ յունիսի 5-ին, ժամը 1-ին, նշանակված է աճուրդ՝ կառուցանելու համար հատ. 0,375×0,25 եւ 0,25×0,16 երկարութեամբ 16,00 պ. սաժ. բէտոնեան կոյուղի, Բագրատիոնսկայա փողոցի վրա գոյութիւն ունեցող կոյուղուց Ֆոմինսկայա եւ Մէսխիէվսկայա փողոցներով մինչեւ Ակսպօվի տունը, 1500 ր. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմանները տեսնել Վարչութեան չինարարական բաժնում բոլոր լի օրերը, ցերեկվայ ժամը 9-ից մինչեւ 3-ը։ 1—3

ԲԺԻՇԿ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ամսոյս 16-ին մեկնեց կովկասեան հանքային ջրերը, որտեղ, նախկին տարիների պէս, կընդունէ հիւանդներին։
Հասցէն՝ Пятигорскъ, Верхній бульваръ, д. Карповой. 11—15

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ
Վերադառնալով արտասահմանից՝ ընդունում է բերանի եւ ատամների հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է արուեստական ատամներ, քիթ, քիմք (обтураторъ) եւ վերին ու ստորին անդամատուած ծնօտների պրոթէզներ (протезы)։
Առաւօտեան 8—2 ժամը
Երեկոյեան 5—8 »
Հասցէն՝ Пушкинская ул. № 16, надъ магазиномъ Шадинова. 23—25

Մեծ-Ղարաքիլիսայի կայարանում պարապում եմ կոմիսիոնէրութեամբ զանազան տեսակ ապրանքներ տեղափոխելու։ Պատուէրները կատարվում են ճշդութեամբ։
Դիմել՝ Б.-Караклисъ, Араму Матинянцъ. 2—5

Թախանձագին խնդրում եմ Ռուսաստանի եւ արտասահմանի հայերին ում յայտնի է Ալէքսանդրօպոլից արդէն մի տարի անյայտ հեռացած Արշակ Հաջիբաբեան Կարապետեանցի բնակութեան տեղը կամ ով նրա մասին որ եւ է տեղեկութիւն ունի՝ յայտնէ հետեւեալ հասցէով.
Тифлисъ, редакція «Мшакъ», Аршалуйсу Мхитаріянцъ.
10—12 Յարութիւն Կարապետեանց

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա. Վօրոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանցի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. Ռոսսոմբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ. ծաղիկ է կտրում նոյնպէս և կիրակի, առաւօտեան ժամի 9—10.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ,
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻԱ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ.
եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի (6/19 յունիսի) շոգենաւ՝ ԱՆԱՏՕԼԻ, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորական պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանդիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկեանի, № 27։ ՆՈՎՈՐՕՍԻԲՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. չ.) 10—20

Գ. Լ. ԿՈՒԶԱՆԵԱՆԻ ՊԱՆՍԻՕՆԸ
Յունիսի 10-ին տեղափոխվում է Բօրժոմ ամարանոցը։ Ցանկացողները իրանց որդիներին ուղարկել, կարող են դիմել մինչեւ յունիսի 7-ը, իսկ յետոյ պայմանների մասին տեղեկանալ դպրոցում։ Պարապմունքները ամառը շարունակվում են։ Աշակերտների ընդունելութիւնը ամեն օր։ Бебутовская ул., № 50. 6—6

СЕКРЕТЪ КРАСОТЫ
ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ
А. СІУ и К°. МОСКВА. 20 коп. куб.
М. 109486

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում
Արծրունի Վ. բժ., Վատ ցաւ, պատկերազարդ, Թիֆլիս, 1901 թ. գ. 6 կոպ.
Էչէգաոա, Մարիանա, դրամա 3 գործողութեամբ եւ վերջաբանով, Բագու, 1900 թ. գ. 1 ր.
Ղամազեան Ն. քահ., Քրիստոնէական վարդապետութիւն, պետական միջնակարգ դպրոցների հայ աշակերտների համար, Թիֆլիս, 1901 թ. գ. 20 կ.
Շիլլէր, Օրլէանի կոյսը, Թիֆլիս, 1901 թ. գ. 20 կ։
Աբեղեան Ման., Գէորգ Դ. Մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, մի պատկերով, Վղրշ. գ. 50 կոպ.
Խրիմեան Հայրիկ, Խաչի ճառ Յիսուսի վերջին շաբաթ, գ. տիպ., ս. էջմիածին, գ. 30 կ.
» Մարգարիտ երկնից արքայութեան, գ. տիպ, ս. էջմիածին, գ. 30 կ.
» Պապիկ եւ թոռնիկ, ս. էջմիածին, գ. 60 կ.
Ծատուրեան Ալ., Երեսուն եւ հինգ տարի, Մօսկ., գ. 30 կ.
Կոստանեան Կ., Ս. Լուսաւորչի աջը, Վղրշ., գ. 15 կ.
Փափազեան Վ., Հայ-Բօշաներ, Թիֆլ., գ. 50 կ.
» Սանթօ, Թիֆլ. գ. 30 կ.
Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (Հ. չ.) 3—3

Р. К. и К°
ФАБРИЧНО-ТОРГОВОЕ ТОВАРИЩЕСТВО
Р. КЁЛЕРЪ и К°
ВЪ МОСКВѢ, ИЛЬИНКА, СРЕДНІЕ ТОРГ. РЯДЫ.
ЗАВОДСКІЙ КЛЕЙМО ТОРГ. МАРКА
ОТДѢЛЕНІЯ: ВЪ С.ПЕТЕРБУРГѢ, САРАТОВѢ, ВЛАДИВОСТОКѢ И НИЖЕГОРОДСКОЙ ЯРМАРКѢ.

Чистый Химичъ, СѢРНОКИСЛЫЙ и СОЛЯНОКИСЛЫЙ.
Представляется полная возможность запастись этимъ необходимымъ въ каждомъ домѣ лѣчебнымъ средствомъ за самую недорогую цѣну съ вѣрнымъ ручательствомъ Т-ва Р. Кёлеръ и К° за химическую чистоту препаратовъ. Непремѣнное условіе: требовать на каждой стеклянной банкѣ, съ фирменнымъ ярлыкомъ и клеймомъ Т-ва неповрежденную проволочную сѣтку съ пломбой Товарищества: Р. К. и К°.

Цѣна 1 руб.
КЁЛЕРСКАЯ КАРМАННАЯ ДОРОЖНАЯ АПТЕЧКА
содержитъ 20 необходимѣйшихъ средствъ и предметовъ для подачи первоначальной помощи при всѣхъ наичаще встрѣчающихся заболѣваніяхъ, пораненіяхъ и проч. съ наставленіемъ.
Продажа особымъ циркуляромъ Медицинскаго Департамента отъ 24 декабря 1897 г. № 8906 разрѣшена не только въ аптекахъ, но и всюду: въ магазинахъ, на желѣзнодорожныхъ станціяхъ, пароходныхъ пристаняхъ и т. д.

КЁЛЕРСКІЕ УСОВЕРШЕНСТВОВАННЫЕ КОЛЬДЪ-КРЕМЫ И ГУБНАЯ ПОМАДА
всегда отличаются своею свѣжестью и проявляютъ свои превосходныя свойства во всѣхъ случаяхъ ихъ употребленія.

КЁЛЕРСКАЯ Душистая Вода
ЛУЧШЕ ВСЯКИХЪ ОДЕКОЛОНОВЪ.
КЁЛЕРСКІЕ ЦВѢТОЧНЫЕ ОДЕКОЛОНЫ ВСѢХЪ ЗАПАХОВЪ
ПО НѢЖНОСТИ И СТОЙКОСТИ АРОМАТА внѣ конкурренціи.

КЁЛЕРСКІЕ Z—ДУХИ
ФАБРИКИ Т-ВА Р. КЁЛЕРЪ и К°.
ЭТИ ДУХИ ПРЕДСТАВЛЯЮТЪ СОБОЮ ПОСЛѢДНЕЕ СЛОВО ПАРФЮМЕРНАГО ИСКУССТВА.
Кёлерскіе Z духи, не смотря на всю свою нѣжность, очень концентрированы и поэтому ихъ пріятный запахъ развивается при употребленіи только мало помалу и ЗАТѢМЪ УДЕРЖИВАЕТСЯ НѢСКОЛЬКО СУТОКЪ.

КЁЛЕРСКІЕ СГУЩЕННЫЕ Желе, Кисель, Мороженое РАЗНЫХЪ ВКУСОВЪ И КЛЮКВЕННЫЙ КВАСЪ.
Вкусно! Удобно! Дешево!
ВЫСШАЯ НАГРАДА GRAND PRIX НА ПАРИЖСКОЙ ВЫСТАВКѢ 1900 г.

ВЪ ПРОДАЖѢ ВЕЗДѢ у ВСѢХЪ БОЛѢЕ ИЗВѢСТНЫХЪ ТОРГОВЦЕВЪ.

(Սպ. 12, յուն. 2, 12, 23)

Дозволено цензурою, Тифлисъ, 1 Іюня 1901 г. Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.